4) նախատեսվող Նոր Խարբերդի այգեգործական տարածքի Ձորի թաղամասի 7-րդ փողոցի 1-ին նրբանցքի հետ խաչվող հանգույցից սկսվող, Ձորի թաղամասի 7-րդ փողոցին զուգահեռ ձգվելով, հ.01-011-0563-0255 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նոր Խարբերդի այգեգործական տարածքի Ձորի թաղամասի 8-րդ փողոց,**

5) նախատեսվող Նոր Խարբերդի այգեգործական տարածքի Ձորի թաղամասի 8-րդ փողոցից սկսվող և հ.01-011-0643-0001 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նոր Խարբերդի այգեգործական տարածքի Ձորի թաղամասի 8-րդ փողոց, 1-ին նրբանցք,**

6) նախատեսվող Նոր Խարբերդի այգեգործական տարածքի Ձորի թաղամասի 8-րդ փողոցից սկսվող և հ.01-011-0563-0224 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նոր Խարբերդի այգեգործական տարածքի Ձորի թաղամասի 8-րդ փողոց, 2-րդ նրբանցք,**

7) նախատեսվող Նոր Խարբերդի այգեգործական տարածքի Ձորի թաղամասի 8-րդ փողոցից սկսվող և հ.01-011-0642-0001 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նոր Խարբերդի այգեգործական տարածքի Ձորի թաղամասի 8-րդ փողոց, 3-րդ նրբանցք,**

8) նախատեսվող Նոր Խարբերդի այգեգործական տարածքի 11-րդ փողոցի 1-ին նրբանցքից սկսվող, նախատեսվող Ձորի թաղամասի 8-րդ փողոցին զուգահեռ ձգվելով, հ.01-011-0563-0193 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նոր Խարբերդի այգեգործական տարածքի Ձորի թաղամասի 9-րդ փողոց,**

9) Նոր Խարբերդի այգեգործական տարածքի 11-րդ փողոցից սկսվող, ուղղաձիգ ձգվելով Նոր Խարբերդի այգեգործական տարածքի 16-րդ, 20-րդ փողոցները հատող և հ.01-011-0563-0185 կադաստրային ծածկագրով գույքի շրջակայք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նոր Խարբերդի այգեգործական տարածքի Ձորի թաղամասի 10-րդ փողոց,**

10) Նոր Խարբերդի այգեգործական տարածքի 24-րդ փողոցից սկսվող և տվյալ փողոցի հետ եռանկյունաձև տարածք ստեղծելով, հ.01-011-0573-0011 կադաստրային ծածկագրով գույքի շրջակայք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նոր Խարբերդի այգեգործական տարածքի 24-րդ փողոց, 1-ին նրբանցք,**

11) Նոր Խարբերդի այգեգործական տարածքի 24-րդ փողոցից սկսվող և ուղղաձիգ ձգվելով, Նոր Խարբերդի այգեգործական տարածքի Անտառային փողոց հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նոր Խարբերդի այգեգործական տարածքի 24-րդ փողոց, 2-րդ նրբանցք,**

12) նախատեսվող Նոր Խարբերդի այգեգործական տարածքի 24-րդ փողոցի 1-ին նրբանցքից սկսվող և հ.01-011-0575-0149 կադաստրային ծածկագրով գույքի շրջակայք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նոր Խարբերդի այգեգործական տարածքի 24-րդ փողոց, 1-ին փակուղի,**

13) Ներքին Չարբախի 1-ին փողոցից սկսվող և երկաթգիծ հասնող ճանապարհահատվածներն անվանակոչել **Ներքին Չարբախի 1-ին փողոց, 1-11-րդ փակուղիներ,**

14) Ներքին Չարբախի 1-ին փողոցից սկսվող և Ներքին Չարբախի 9-րդ փողոցի 1-ին նրբանցք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Ներքին Չարբախի 16-րդ փողոց,**

15) Ներքին Չարբախի 1-ին փողոցից սկսվող, Ներքին Չարբախի 9-րդ փողոցի 1-ին նրբանցք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Ներքին Չարբախի 17-րդ փողոց,**

16) Ներքին Չարբախի 1-ին փողոցից սկսվող և Ներքին Չարբախի 9-րդ փողոցի 1-ին նրբանցք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Ներքին Չարբախի 18-րդ փողոց,**

17) Ներքին Չարբախի 1-ին փողոցից սկսվող և Ներքին Չարբախի 9-րդ փողոցի 1-ին նրբանցք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Ներքին Չարբախի 19-րդ փողոց,**

18) Ներքին Չարբախի 1-ին փողոցից սկսվող և նախատեսվող Ներքին Չարբախի 19-րդ փողոց հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Ներքին Չարբախի 20-րդ փողոց,**

19) Ներքին Չարբախի 1-ին փողոցից սկսվող և դաշտամիջյան հատված հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Ներքին Չարբախի 21-րդ փողոց,**

20) Երևան-Դարակերտ խճուղուց սկսվող և դաշտամիջյան հատված հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Ներքին Չարբախի 22-րդ փողոց,**

21) Երևան-Դարակերտ խճուղուց սկսվող և դաշտամիջյան հատված հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Ներքին Չարբախի 23-րդ փողոց,**

22) Երևան-Դարակերտ խճուղուց սկսվող և դաշտամիջյան հատված հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Ներքին Չարբախի 24-րդ փողոց,**

23) Երևան-Դարակերտ խճուղուց սկսվող և դաշտամիջյան հատված հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Ներքին Չարբախի 25-րդ փողոց,**

24) Երևան-Դարակերտ խճուղուց սկսվող և դաշտամիջյան հատված հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Ներքին Չարբախի 26-րդ փողոց,**

25) Ներքին Չարբախի 9-րդ փողոցից սկսվող, ոլորած, գերեզմանատուն հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Ներքին Չարբախի 9-րդ փողոց, 1-ին նրբանցք,**

26) Ներքին Չարբախի 9-րդ փողոցից սկսվող, ոլորած, Ներքին Չարբախի 9-րդ փողոց հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Ներքին Չարբախի 9-րդ փողոց, 2-րդ նրբանցք:**

9. Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի.

1) Կարապետ Ուլնեցու փողոցից սկսվող և «Ալմաստ» գործարանի հարևանությամբ գտնվող տրանսպորտային հանգույց հասնող ճանապարհահատվածն անվանակոչել ջրացատկորդ Դավիթ Համբարձումյանի անվամբ՝ **«Դավիթ Համբարձումյան փողոց»,**

2) նախատեսվող Դավիթ Համբարձումյան փողոցից սկսվող և Բաբայան փողոցի սկիզբ հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Դավիթ Համբարձումյան փողոց, 1-ին նրբանցք,**

3) նախատեսվող Դավիթ Համբարձումյան փողոցի 1-ին նրբանցքից սկսվող և հ.01-012-0327-0498 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Դավիթ Համբարձումյան փողոց, 1-ին փակուղի,**

4) նախատեսվող Դավիթ Համբարձումյան փողոցի 1-ին նրբանցքից սկսվող և հ.01-012-0327-0498 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Դավիթ Համբարձումյան փողոց, 2-րդ փակուղի,**

5) նախատեսվող Դավիթ Համբարձումյան փողոցի 1-ին նրբանցքից սկսվող և հ.01-012-0327-0484 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Դավիթ Համբարձումյան փողոց, 3-րդ փակուղի,**

6) նախատեսվող Դավիթ Համբարձումյան փողոցից սկսվող և հ.01-012-0341-0333 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Դավիթ Համբարձումյան փողոց, 4-րդ փակուղի,**

7) նախատեսվող Դավիթ Համբարձումյան փողոցից սկսվող և հ.01-012-0341-0590 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Դավիթ Համբարձումյան փողոց, 5-րդ փակուղի,**

8) Երևանի Շամպայն գինիների գործարանի հարակից տարածքից սկսվող և Քանաքեռի 12-րդ փողոց հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Թբիլիսյան խճուղի, 1-ին նրբանցք:**

6. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի հունիսի 24-ի N 372-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի հունիսի 24-ի «Երևան քաղաքում Օֆելյա Համբարձումյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» N 372-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունն ու լրացումները.

1) Որոշման 1-ին կետում «(սկսվում է Տիգրան Պետրոսյան փողոցից, հասնում՝ 6/7 հասցեի հարակից տարածք)» բառերը փոխարինել «(սկսվում է Տ. Պետրոսյան փողոցից, հասնում հ.01-004-0001-0178 ծածկագրով գույք)» բառերով,

2) Որոշման 1-ին կետից հետո լրացնել նոր 1.1, 1.2, 1.3, 1.4, 1.5 կետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Օֆելյա Համբարձումյան փողոցից սկսվող և հ.01-004-0001-0173 ծածկագրով գույք հասնող հատվածն անվանակոչել Օֆելյա Համբարձումյան փողոց, 1-ին նրբանցք:

1.2. Օֆելյա Համբարձումյան փողոցից սկսվող և հ.01-004-0001-0173 ծածկագրով գույք հասնող հատվածն անվանակոչել Օֆելյա Համբարձումյան փողոց, 2-րդ նրբանցք:

1.3. Օֆելյա Համբարձումյան փողոցից սկսվող և հ.01-004-0001-0173 ծածկագրով գույք հասնող հատվածն անվանակոչել Օֆելյա Համբարձումյան փողոց, 3-րդ նրբանցք:

1.4. Օֆեյյա Համբարձումյան փողոցից սկսվող և հ.01-004-0001-0173 ծածկագրով գույք հասնող հատվածն անվանակոչել Օֆեյյա Համբարձումյան փողոց, 4-րդ նրբանցք:

1.5. Օֆեյյա Համբարձումյան փողոցից սկսվող և հ.01-004-0001-0122 ծածկագրով գույք հասնող հատվածն անվանակոչել Օֆեյյա Համբարձումյան փողոց, 5-րդ նրբանցք:»:

7. Երևան համայնքի սեփականություն համարվող Բաբաջանյան փողոց հ. 71 շենքի հ. 54 բնակարանն անհատույց օտարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Բաբաջանյան փողոց հ.71 շենքի հ.54 բնակարանն անհատույց սեփականության իրավունքով օտարել (նվիրել) Կարեն Նորայրի Պողոսյանին, Սաթենիկ Մարատի Գևորգյանին, Սյուզաննա Կարոլինա Կարենի Պողոսյանին և Նորիկ Կարենի Պողոսյանին:

8. Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Աճառյան փողոց հ.37/37 հասցեում թվով երկու բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Գոհար Բաղդասարյանի կողմից ներկայացված Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Աճառյան փողոց հ. 37/37 հասցեում թվով երկու բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմին և նախաձեռնողին:

9. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Արզումանյան փողոց հ.8 հասցեում Երևանի Ա.Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոցի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «ԳԼՈՒԼ ՊՐՈԵԿՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Արզումանյան փողոց հ. 8 հասցեում Երևանի Ա.Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոցի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմին և նախաձեռնողին:

10. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Գ. Նժդեհի փողոց հ.11 հասցեում Երևանի Վ. Համբարձումյանի անվան հ.12 հիմնական դպրոցի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «ԳԼՈՐԱԼ ՊՐՈԵԿՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Գ. Նժդեհի փողոց հ. 11 հասցեում Երևանի Վ.Համբարձումյանի անվան հ. 12 հիմնական դպրոցի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել անհամաձայնություն՝ հետևյալ պատճառաբանությամբ.

1) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2014 թվականի ապրիլի 9-ի N 103-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ31-03.01-2014 «Հանրակրթական նշանակության շենքեր» շինարարական նորմերի» (այսուհետ՝ Նորմեր) 42-րդ կետի համաձայն՝ հանրակրթական հաստատությունների տարածքը պետք է կանաչապատվի և ապահովի անհրաժեշտ բնակլիմայական միջավայր: Կանաչ տարածքը պետք է ունենա հանրակրթական հաստատությունների զբաղեցրած տարածքի 50%-ից ոչ պակաս մակերես: Նախաձեռնողի կողմից ներկայացված էսքիզ-առաջարկի համաձայն կանաչապատման մակերեսը կազմում է 1005,81 մ²՝ տարածքի 21%-ը, այսինքն տվյալ նախատեսվող գործունեության դեպքում չի պահպանվում Նորմերով սահմանված պահանջը:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմինն և նախաձեռնողին:

11. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված անձանց՝ 2026 թվականի ընթացքում շարունակելու հավելվածում նշված տարածքներում և սահմանված պայմաններով նախորդ տարիներին կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը:

12. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 482-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան համայնքում 2026 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» N 482-Ն որոշման 1-ին կետի 18-րդ ենթակետից հետո լրացնել նոր 18.1-ին և 18.2-րդ ենթակետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«18.1) 1500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր

շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ 1500 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետրի համար կիրառելով գրոյական դրույքաչափ (արդյունքում՝ 1500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար տեղական վճարը սահմանվում է 300000 /երեք հարյուր հազար/ դրամ), եթե Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից ավարտված շինարարական օբյեկտի՝ հաստատված նախագծին և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխանությունը հավաստելու նպատակով ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողովի ակտը Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով մուտքագրվել է Երևանի քաղաքապետարան մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ և այն հանձնաժողովի կազմում ընդգրկված Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից սահմանված կարգով, urban.e-gov.am հարթակի միջոցով՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատվել է 2026 թվականի հունվար ամսվա ընթացքում:

18.2) 1500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 459-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ 1500 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետրի համար կիրառելով գրոյական դրույքաչափ (արդյունքում՝ 1500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար տեղական վճարը սահմանվում է 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ), եթե աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար դիմումը դիմումատուի կողմից ներկայացվել է մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ և մինչև նշված օրը Երևանի քաղաքապետարան ներկայացվել են նշված օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը. »:

13. «Ձևավորում և սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել «Ձևավորում և սպասարկում» համայնքային համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

14. Գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան համայնքի սեփականություն համարվող գույքը (երաժշտական գործիքներ), ընդհանուր՝ 53485000 (հիսուներեք միլիոն չորս հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով, սեփականության իրավունքով անհատույց հանձնել (նվիրել) Երևանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցներին՝ համաձայն հավելվածի:

15. «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին հանձնված (ամրացված) գույքը հետ վերցնելու և գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին:

1. ՈՐՈՇՎԵՑ – 1. Հետ վերցնել «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին հանձնված (ամրացված) գույքը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետով նշված գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Երևան քաղաքի թվով 9 մանկապարտեզներին, «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն», «Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան», «Ձևավորում և սպասարկում» ՀՈԱԿ-ներին և «Երքաղլույս» ՓԲԸ-ին՝ համաձայն N 2 հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 37, դեմ՝ 11, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ այժմ քննարկման է ներկայացվում 2026 թվականի փետրվարի 10-ի հերթական նիստի զեկուցվող հարցերը:

16. Երևան քաղաքի կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի գործողությունների ծրագիրը հաստատելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային՝ քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևան քաղաքի կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն:

ՁԵԿՈՒՑԵՑ–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 5 անդամ:

1. Տիգրան Պետրոսյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց. խմբակցության անդամ
2. Մեսրոպ Մանուկյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
3. Իզաբելլա Աբգարյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

4. Հայկ Գրիգորյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
5. Հայկ Միրզոյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
6. Սամվել Հակոբյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը և քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել է ավագանու 6 անդամ.

1. Մեսրոպ Մանուկյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
2. Իզաբելլա Աբգարյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց. խմբակցության անդամ
3. Սամվել Հակոբյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
4. Արշակ Սարգսյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
5. Արամ Թորոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար
6. Արմենակ Դանիելյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանը, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անունից՝ խմբակցության ղեկավար Արմեն Գալստյանը, «Հանրապետություն» խմբակցության անունից՝ խմբակցության քարտուղար Մհեր Բեջանյանը, «Մայր Հայաստան» խմբակցության անունից՝ խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանը:

Ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Երևան քաղաքի կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի գործողությունների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 38, դեմ՝ 8, ձեռնպահ՝ 13

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու քննող հանձնաժողովի նախագահ, Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջանը և ներկայացրեց 1991 թվականի սեպտեմբերի 21-ից մինչև 2025 թվականն ընկած ժամանակահատվածում Երևանի նախկին թաղային համայնքների և Երևան համայնքի սեփականություն հանդիսացող մանկապարտեզների ու դպրոցների տարածքների օտարման գործընթացների վերաբերյալ եզրակացությունը:

I. Քննության շրջանակը

Երևանի ավագանու քննող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), իր լիազորությունների շրջանակում ուսումնասիրել է 1991 թվականի սեպտեմբերի 21-ից մինչև 2025 թվականն ընկած ժամանակահատվածում Երևանի նախկին թաղային համայնքների և Երևան համայնքի սեփականություն հանդիսացող մանկապարտեզների ու դպրոցների տարածքների օտարման գործընթացները:

Քննության նպատակով գրավոր հարցումներ են ուղարկվել մի շարք պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ՝ ավագանիների, թաղապետերի և քաղաքապետերի կողմից կայացված որոշումները և դրանց հիմնավորումները ստանալու համար:

Նպատակ է եղել ստանալ հետևյալ գործողությունների իրավական հիմքերը՝

- նախադպրոցական կրթական հաստատությունների լուծարում կամ միավորում,

- համայնքային սեփականություն հանդիսացող մանկապարտեզների տարածքների ամբողջական կամ մասնակի օտարում:

Քննության ընթացքում հետազոտվել են հարցումների արդյունքում ստացված բոլոր իրավական ակտերը և տեղեկատվությունները, որոնց համադրված վերլուծության արդյունքում ձևավորվել է սույն եզրակացությունը:

II. Ընդհանուր համակարգային գնահատական

Հանձնաժողովն արձանագրում է, որ ուսումնասիրված գործարքները՝

- կրել են համակարգված բնույթ,
- իրականացվել են կրկնվող սխեմաներով,
- ընդգրկել են Երևանի բոլոր վարչական շրջանները և ժամանակային տևական հատված,

- հանգեցրել են նույնատիպ հետևանքների՝ հանրային գույքի կորստի և համայնքային կրթական ենթակառուցվածքների թուլացման:

Հանձնաժողովի գնահատմամբ տեղի են ունեցել ոչ միայն կառավարչական սխալներ, այլև գործել է համայնքային գույքի կառավարման ոլորտում ձևավորված համակարգային արատավոր պրակտիկա, որը հատկապես դրսևորվել է 1997-2007 թվականներին: Մասնավորապես, բազմաթիվ դեպքերում փորձ է արվել որպես լուծարման հիմք ներկայացնել թերբեռնվածությունը կամ շենքի վթարային լինելը, այնինչ դրանք հիմնավորող փաստաթղթեր առկա չեն եղել և հետագա տարիները ցույց են տվել, որ առկա են երեխաների հազարավոր հերթեր: Ըստ էության, կարելի է արձանագրել, որ հանրային շահը ստորադասվել է մասնավոր շահին: Հանձնաժողովը փաստում է, որ ընդհանուր առմամբ լուծարվել և օտարվել են շուրջ 70 մանկապարտեզ,

ևս մի քանի տասնյակը երկար տարիներ տրվել են վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման:

III. Բովանդակային գնահատական

1. Հանրային շահի և երեխաների իրավունքների խախտում

Մանկապարտեզների լուծարումները՝

- չեն հիմնավորվել նախադպրոցական կրթության պահանջարկի իրական նվազումով,

- չեն իրականացվել ժողովրդագրական և կրթական պահանջարկի կանխատեսումներ,

- չեն ապահովել երեխաների կրթական իրավունքների իրացման շարունակականությունը:

Նշված գործընթացները հակասում են՝

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված սոցիալական պետության սկզբունքին, ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված երեխաների անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծման պարտավորությանը, երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին:

2. Համայնքային գույքի օտարման իրավաչափության խնդիրներ

Հանձնաժողովն արձանագրում է, որ հիմնականում՝

- համայնքային գույքն օտարվել է առանց մրցակցային միջավայրի ապահովման,

- բացակայում են գույքի անկախ գնահատման փաստաթղթերը,

- չեն պահպանվել աճուրդային ընթացակարգերը և չի ապահովվել հանրային վերահսկողությունը,

- վաճառքի գները էականորեն շեղվել են շուկայական և կադաստրային արժեքներից:

- Մի շարք դեպքերում մանկապարտեզների լուծարումն ու դրանց գույքի օտարումն իրականացվել են կարճ ժամանակային հաջորդականությամբ, ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ լուծարման գործընթացը ծառայել է որպես գույքի մասնավորեցման գործիք:

IV. Համայնքներին պատճառված վնասի համապարփակ գնահատում

1. Ֆինանսական վնաս

Մանկապարտեզների շենքերը և տարածքները վաճառվել են տվյալ ժամանակահատվածի շուկայականից էական ցածր գներով:

Համայնքին հասցված համախառն վնասը, ներառելով բոլոր վարչական շրջանները և տարիները և հաշվարկվելով այդ տարիների անշարժ գույքի և հողի շուկայական արժեքներով, կարող է հասնել հարյուրավոր միլիոն դրամներից մինչև միլիարդավոր դրամներ նշված ժամանակաշրջանի համար, իսկ դրանց հետևանքները և բացասական ազդեցությունները հետագա տարիներին արդեն մի քանի տասնյակ միլիարդավոր դրամներ՝ այդ թվում հաշվարկվելով գործող մանկապարտեզների վերակառուցումը կամ նորերի կառուցումը:

Օրինակներ՝

1. Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Քանաքեռցու 32 հասցեի թիվ 249/159 մանկապարտեզի 1284 քմ շինությունը օտարվել է 5 մլն դրամով, որի միայն կադաստրային արժեքը նշված ժամանաշրջանում կազմել է 1 քմ-ի հաշվարկով մոտ 40.000 դրամ. ստացվում է, որ գույքը վաճառվել է 1քմ-ը 3900 դրամով, այսինքն՝ 2005 թվականին գործող կադաստրային արժեքից ավելի քան 10 անգամ ցածր գնով:

2. Նոր Նորք վարչական շրջանի Նանսենի 1 նրբ. 3 հասցեում գտնվող թիվ 25 մանկապարտեզի 165.6քմ տարածքը վաճառվել է 1.392.700 դրամով, որի միայն կադաստրային արժեքը նշված ժամանաշրջանում կազմել է 7.611.100 դրամ:

3. Նոր Նորք վարչական շրջանի Ավետիսյան 5 հասցեի թիվ 22 մանկապարտեզի մասնաշենքի մի հատվածը, մասնավորապես՝ ճաշարանին հարող երկհարկանի 654 քմ տարածքը, վաճառվել է 3,646,120 դրամով, որը կազմում է մոտ 5,575 դրամ մեկ քմ-ի համար:

Տվյալ ժամանակաշրջանում Նոր Նորք վարչական շրջանում անշարժ գույքի 1քմ-ի կադաստրային արժեքը կազմել է մոտ 46.000 դրամ:

4. Ավան վարչական շրջանի Ավանի 4-րդ փողոցի թիվ 1-ին մակապարտեզը 2004 թվականին 784քմ շինությունը օտարվել է 7.900.000 դրամով, որի միայն կադաստրային արժեքը նշված ժամանաշրջանում կազմել է 45.513.600 դրամ՝ այսինքն 1քմ-ը 58.000 դրամի փոխարեն վաճառվել է 10.000 դրամով:

5. Նոր Նորք վարչական շրջանի Միկոյան 19/1 հասցեում գտնվող մշակույթի տան 335 քմ ոչ բնակելի տարածքը 2002թ. օտարվել է 1.266.300 դրամով, որի միայն կադաստրային արժեքը նշված ժամանաշրջանում կազմել է 16.069.000 դրամ:

2. Սոցիալական հետևանքներ՝

Երևան քաղաքում գործում է 162 մանկապարտեզ, որոնցից շահագործվում է 145-ը: Գործող մանկապարտեզներում առկա է 972 խումբ, որտեղ հաճախում է 27 718 երեխա, մինչդեռ հերթում գտնվում է 13.933 երեխա:

Հերթագրված երեխաներից 4491-ը 2024 թվականին ծնվածներն են, իսկ 9442-ը՝ 2020–2023 թվականներին:

Քաղաքային մակարդակով մեկ մանկապարտեզում միջինում հաճախում է շուրջ 191 երեխա, իսկ հերթում գտնվում է մոտ 96 երեխա: Ընդհանուր հարաբերակցությամբ մանկապարտեզ հաճախող յուրաքանչյուր երկու երեխայի դիմաց հաշվվում է մեկ հերթագրված երեխա, ինչը գերազանցում է համակարգի բնական ծանրաբեռնվածության սահմանները:

Վերոնշյալ գործընթացները հանգեցրել են՝

- նախադպրոցական կրթության հասանելիության կտրուկ նվազման,
- մանկապարտեզների ընդունելության բազմամյա հերթերի ձևավորման,
- ծնողների սոցիալ-տնտեսական ծանրաբեռնվածության աճի և աշխատանքի իրավունքի իրացման սահմանափակման,
- համայնքային սոցիալական ենթակառուցվածքների քայքայման:

Այս վնասները կրում են երկարաժամկետ, կուտակային բնույթ և ներկայումս պահանջում են բազմակի անգամ ավելի մեծ ներդրումներ՝ համակարգի վերականգնման և նոր մանկապարտեզների կառուցման համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովը, համադրելով ուսումնասիրված փաստաթղթերը, ստացված պատասխանները և իրականացված վերլուծությունները, եզրակացնում է, որ դիտարկված ժամանակահատվածում համայնքային գույքի կառավարման ոլորտում առկա են եղել համակարգային թերություններ, վերահսկողության և թափանցիկության պակաս, ինչպես նաև հաշվետվողականության անբավարար մեխանիզմներ:

Արձանագրված գործընթացների արդյունքում էականորեն կրճատվել են նախադպրոցական կրթական ենթակառուցվածքները, սահմանափակվել է կրթության հասանելիությունը և համայնքին պատճառվել է երկարաժամկետ նյութական ու սոցիալական վնաս:

Հանձնաժողովը պաշտոնապես արձանագրում է, որ մանկապարտեզների լուծարման և համայնքային գույքի օտարման մի շարք գործընթացներում՝

- չի պահպանվել հանրային շահը,
- ուղեկցվել են իրավական և ընթացակարգային էական խախտումներով կամ թերություններով, բազմաթիվ փաստաթղթեր առկա չեն եղել,
- հանգեցրել են հանրային նշանակության գույքի կորստի,
- ձևավորել են համայնքների համար զգալի ֆինանսական բեռ ապագայում,
- բացասաբար են անդրադարձել երեխաների կրթության հասանելիության վրա,
- առկա են առերևույթ կոռուպցիոն սխեմաներ պարունակող գործարքներ:

Միաժամանակ, Հանձնաժողովն արձանագրում է, որ համայնքային գույքի արդյունավետ կառավարումը հանդիսանում է տեղական ինքնակառավարման հիմնարար պարտականություններից մեկը, իսկ երեխաների կրթության հասանելիության ապահովումը՝ սոցիալական պետության առաջնային պատասխանատվությունը:

Սույն զեկույցով ներկայացված գնահատականներն ու փաստերը նպատակ ունեն ոչ միայն արձանագրելու անցյալում տեղի ունեցած գործընթացները, այլև նպաստելու ապագայում նման երևույթների կանխարգելմանը, համայնքային գույքի կառավարման թափանցիկության բարձրացմանը և հանրային շահի անվերապահ պաշտպանությանը:

Հանձնաժողովը համոզված է, որ հանրային նշանակության գույքի կառավարումը պետք է առաջնորդվի բացառապես հանրային շահի գերակայության սկզբունքով:

Հանձնաժողովը վստահ է, որ այս գործընթացների համակողմանի գնահատումը կարևոր քայլ է ավելի պատասխանատու, հաշվետու և հանրային շահին միտված կառավարման մշակույթի ձևավորման ճանապարհին:

Հարցերի համար գրանցվել են ավագանու 10 անդամ.

1. Գրիգոր Իսկանդարյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

2. Սամվել Հակոբյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

3. Արման Բաբաջանյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

4. Միքայել Խաչատրյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

5. Արման Բարխուդարյան-Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

6. Իոսիֆ Կուբատյան-Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

7. Արամ Թորոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար

8. Մանուկ Սուքիասյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար

9. Սուսաննա Մելիքյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

10. Տիգրան Պետրոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի ավագանու քննող հանձնաժողովի նախագահ, Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալստյանը:

Ելույթների համար գրանցվել են ավագանու 12 անդամ.

1. Արշակ Սարգսյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

2. Անի Խաչատրյան - Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ

3. Սամվել Հակոբյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

4. Նատալյա Սինորյան – Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» անդամ

Ընդմիջում

Նիստը վերսկսվեց ժամը 14.00-ին:

5. Միքայել Խաչատրյան-Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

6. Հայկ Միրզոյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

7. Արևիկ Բլեջյանց - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

8. Աշոտ Սարգսյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

9. Լուսինե Սարգսյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

10. Լևոն Լևոնյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

11. Քրիստինե Վարդանյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

12. Մանուկ Սուքիասյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության անդամ Սուսաննա Մելիքյանը:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու քննող հանձնաժողովի նախագահ, Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ